15. Մկնիկի ցուցիչով ընտրեք *A_2* ֆայլադարանն ու *Delete* ստեղնով այն ջնջեք: Ջնջելու հրամանն այստեղ ևս հաստատեք *Yes* կոճակով:
16. Պատուհանի ղեկավարման ☒ կոճակով փակեք *Computer* պատուհանը:

§2.3. ՋԱՄԲՅՈՒՂ *(Recycle Bin)* ԹՂԹԱՊԱՆԱԿ

Քանի որ համակարգչի արտաքին հիշող սարքերի վրա պահպանված ինֆորմացիան ջնջելիս հնարավոր է սխալմամբ արժեքավոր տվյալներ կորցնել, ապա *Windows* օպերացիոն համակարգում ջնջելու գործողության համար լրացուցիչ միջոցներ են նախատեսվել. օբյեկտը ջնջելուց առաջ համակարգն առաջարկում է այն ջնջել՝ պահպանելով *Recycle Bin (Ջամբյուղ) համակարգային ֆայլադարանում:*

***Ջամբյուղը (Recycle Bin)* կոշտ սկավառակի վրա հատուկ ձևով կազմակերպված հիշողության տիրույթ է, որը նախատեսված է ջնջված օբյեկտների հետագա պահպանման համար:**

Ջնջելուց հետո օբյեկտը *Ջամբյուղում* պահպանելու առաջարկին կարելի է պատասխանել *Yes* կամ *No* կոճակներից մեկով (նկ. 2.7.): *Yes*-ի դեպքում ջնջված օբյեկտն ուղարկվում է *Recycle Bin*, *No*-ի դեպքում օբյեկտը չի ջնջվում:



Նկ. 2.7. Օբյեկտը ջնջելուց հետո այն Ջամբյուղում պահպանելու վերաբերյալ բերված երկխոսության պատուհան

Այսպիսով, պատահմամբ ջնջված և *Ջամբյուղում* պահպանված օբյեկտներն անհրաժեշտության դեպքում կարելի է նորից վերականգնել, իսկ մնացածները, ջնջման ենթակաները՝ վերջնականապես ջնջել նաև *Recycle Bin*-ից:

Զամբյուղը բացելու համար անհրաժեշտ է.

⇨ մկնիկի ցուցիչը տեղադրել *Recycle Bin* տարբերանիշի վրա,

⇨ սեղմել ձախ սեղմակը:

Զամբյուղում պահպանված օբյեկտը վերականգնելու համար անհրաժեշտ է.

⇨ բացել *Recycle Bin* պատուհանը,

⇨ ընտրել վերականգնման ենթակա օբյեկտը,

⇨ սեղմել պատուհանի տիրույթի *Restore this item* կոճակը (նկ. 2.8.):



Նկ. 2.8. Recycle Bin պատուհան

Զամբյուղում առկա բոլոր օբյեկտները վերականգնելու համար անհրաժեշտ է.

⇨ բացել *Recycle Bin* պատուհանը,

⇨ ընտրել պատուհանի տիրույթում գտնվող *Restore All Items* կոճակը:

Զամբյուղից որևէ օբյեկտ ջնջելու համար անհրաժեշտ է.

⇨ բացել *Recycle Bin* պատուհանը,

⇨ ընտրել ջնջման ենթակա օբյեկտը,

⇨ սեղմել ստեղնաշարի *Delete* ստեղնը:

Զամբյուղի բոլոր օբյեկտները ջնջելու համար անհրաժեշտ է.

⇨ բացել *Recycle Bin* պատուհանը,

⇨ սեղմել պատուհանի *Empty the Recycle Bin* կոճակը (նկ. 2.8.):

Օգտակար է իմանալ

- Ջնջված և *Զամբյուղում* պահպանված օբյեկտը համակարգչի հիշողության մեջ նույնքան տեղ է զբաղեցնում, որքան մինչ այն ջնջելը:
- Համատեղ կիրառվող ստեղներ.

Ստեղները	Նշանակությունը
Ctrl+c	Օբյեկտի պատճենում փոխանակման բուֆերում
Ctrl+x	Օբյեկտը ջնջել՝ *Recycle Bin*-ում պահպանելով
Ctrl+v	Այլ ֆայլադարանում փոխանակման բուֆերի պարունակության պատճեի տեղադրում
Ctrl+n	Նոր փաստաթղթի ստեղծում
Ctrl+o	Ֆայլի բացում
Ctrl+p	Փաստաթղթի տպագրում

- *Զամբյուղից* օբյեկտը կարելի է ջնջել նաև՝ օբյեկտի վրա սեղմելով մկնիկի աջ սեղմակն ու բացված ենթատեքստային մենյուից ընտրելով *Delete* հրամանը (նկ. 2.9.):



Նկ. 2.9. Ենթատեքստային մենյու

Հարցեր և առաջադրանքներ

1. Ինչի՞ համար է *Զամբյուղը:*
2. Ինչպե՞ս կարելի է վերականգնել ջնջված և *Զամբյուղում* պահպանված օբյեկտը:
3. Ինչպե՞ս կարելի է վերականգնել *Զամբյուղի* բոլոր օբյեկտները:
4. Ինչպե՞ս ջնջել *Զամբյուղի* բոլոր օբյեկտները:

Լաբորատոր աշխատանք 7

Օբյեկտների ջնջում և վերականգնում

1. *Start* գլխավոր մենյուից հաջորդաբար ընտրելով *All Programs, MS Office, MS Office Word 2007* գրառումները՝ *Word* տեքստային խմբագրիչի միջավայր մտեք:
2. Մկնիկի ցուցիչը տեղադրեք *KDWin*-ի տարբերանշանի վրա և հաջորդաբար սեղմելով աջ սեղմակը՝ ընտրեք Հայաստանի Հանրապետության դրոշը՝ (հայկական այբուբենը):
3. Մկնիկի ցուցիչը տեղադրեք *Home* ներդիրի *Font* խմբի տառատեսակի ցուցակը բացող ▼ նշանի վրա և սեղմելով ձախ սեղմակը՝ բացված ցուցակից ընտրեք *Arial Armenian* տառատեսակը:
4. Մկնիկի ցուցիչը տեղադրեք *Home* ներդիրի *Font* խմբի տառաչափի ցուցակը բացող ▼ նշանի վրա և սեղմելով ձախ սեղմակը՝ ընտրեք *20* չափը:
5. Ներմուծեք ձեր անունն ու ազգանունը:
6. Ստեղծված փաստաթուղթը պահպանեք *My Documents*-ի տվյալ դասարանի համար հատկացված թղթապանակում՝ *Lab_7_** անունով, որտեղ *-ի փոխարեն ներմուծեք ձեր դասամատյանի համարը:
7. Պատուհանի ղեկավարման կոճակով փակեք *Word* տեքստային խմբագրիչի պատուհանը:
8. Մկնիկի ցուցիչը տեղադրեք *Start* գլխավոր մենյուի պատուհանի աջ տիրույթում առկա *Computer* գրառման վրա և ձախ սեղմակով այն ընտրեք:
9. Մկնիկի ցուցիչով ընտրեք ձեր ստեղծած ֆայլն ու սեղմեք *Delete* ստեղնը:
10. *Yes* կոճակով հաստատեք ձեր համաձայնությունը՝ տվյալ ֆայլը ջնջելու և այն *Recycle Bin*-ում պահպանելու համար տրված հարցին:
11. Մկնիկի ցուցիչը տեղադրեք *Recycle Bin* տարբերանիշի վրա և ձախ սեղմակի կրկնակի սեղմումով այն բացեք:
12. Բացված պատուհանում ընտրեք ձեր ջնջած ֆայլն ու սեղմեք մկնիկի աջ սեղմակը:
13. Բացված մենյուի *Restore* հրամանով վերականգնեք ջնջված ֆայլը:

14. Կրկին ջնջեք վերականգնված ֆայլն ու այս անգամ այն վերականգնեք *Recycle Bin* պատուհանի *Restore this item* կոճակով:
15. Ջնջեք վերականգնված ֆայլն ու պատուհանի ղեկավարման ☒ կոճակով փակեք *Computer* պատուհանը: